

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏՎԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՏԵՂԱԿԱՊՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Լրամշակված տարբերակ)



Նախաձեռնող՝
«Լուր» ՍՊԸ
ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝
«Էկոնոմ Էկո ՍՊԸ»

Երևան, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	7
4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	14
4.1. Նախատեսվող գործունեության համառոտ բնութագիրը.....	14
4.2. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ	18
4.3. Էլեկտրամատակարարում.....	18
4.4. Ջրամատակարարում և ջրահեռացում.....	20
4.5. Ջեռուցում և օդափոխություն.....	24
4.6. Բարեկարգում և կանաչապատում.....	25
4.7. Շինարարական և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում	26
4.8 Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ.....	30
5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	32
5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը.....	32
5.2 Ջրային ռեսուրսներ.....	39
5.3 Հողօգտագործում և հողային ռեսուրսներ.....	42
5.4 Կենսաբազմազանություն	43
5.5 Օդային ավազան.....	44
5.6 Պատմամշակութային հուշարձաններ.....	45
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	46
6.1. Օդային ավազանի աղտոտում	46
6.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	48
6.3. Թափոնների առաջացում և կառավարում.....	49
6.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն.....	51
6.5. Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա	52
6.6. Աշխատանքի անվտանգություն.....	52
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	54
7.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները.....	54

7.2. Մոնիտորինգ.....	55
8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ	56
9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	57
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	58
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	66
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ , ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	69
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱ.....	73
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.....	74
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՇԻՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ.....	77
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԶՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ	78
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՀԷՑ-ի ՏՐԱՄԱԴՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ.....	79
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ... 	83

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատվիրատու

- Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ)

Նախաձեռնող՝

- «Լուք» ՍՊԸ, Հեռ. 077767713, հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան 23 շենք, 26 բն.
- Էլ. Հասցե՝ archlookschoo@gmail.com

ՇՄԱԳ հաշվետվություն մշակող խորհրդատու՝

- «Էկոնոմ Էկո» ՍՊԸ . Հեռ. +374 93 40 18 40
- Էլ. հասցե՝ economecoeia@gmail.com

Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը

- Գեղարքունիքի մարզի, Վարդենիս համայնքի, Շատվան բնակատեղի

Հողատարածքի մակերեսը

- 1.2 (հա)

Դպրոցի նախագծային հզորությունը

- 144 աշակերտի և 80 սաների

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Գեղարքունիքի մարզի, Վարդենիս համայնքի, Շատվան բնակատեղիի միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի կառուցման համար, որի պատվիրատուն հանդիսանում է Հայաստանի Տարածքային զարգացման Հիմնադրամը (ՀՏՀՀ): Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքներն իրականացվել են «Լուր» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Նախատեսվող գործունեության աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-ի «ա» ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան, որում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

- **ՀՀ Սահմանադրություն** (2015). 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12-ը՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:
- **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գնությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:
- **«ՀՀ հողային օրենսգիրք»** (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները:
- **«ՀՀ Զրային օրենսգիրք»** (2002)
- **«Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին»** ՀՀ օրենք
- **«ՀՀ Զրի ազգային ծրագրի մասին»** ՀՀ օրենք (2006)
- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին»** ՀՀ օրենք (2006)
- **«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին»** ՀՀ օրենք (2008)
- **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և

շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- **ՀՀ Օրենքը Մթնոլորտային Օդի Պահպանության մասին** (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:
- **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
- **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)** (Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառվումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
- **ՀՀ Օրենքը Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998թ.)** սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը, և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:
- **ՀՀ Օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006թ.)** սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները: Համաձայն օրենքի բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների, ըստ

կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

- **ՀՀ Օրենքը Բուսական աշխարհի մասին (1999թ.)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:
- **ՀՀ Օրենքը Կենդանական աշխարհի մասին (2000թ.)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները, և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:
- **ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին (12 հունիս, 2002 թ.)** սահմանում է ՀՀ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ Քաղաքաշինության մասին օրենք (05 մայիս, 1998 թ.)** սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր»** շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին
- **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):**
- **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

- **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (2003) սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա** (սեպտեմբերի 25, 2014 թ.) «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- **ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում** 02.11.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ կառավարության N781-Ն որոշում** (31.07.2014թ.) «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության N1504-Ն որոշում** 25.12.2014թ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»
- **ՀՀ կառավարության N426-Ն որոշում** 12.04.2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում 967-Ն ՀՀ** (14 օգոստոս, 2008 թ. «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին») հաստատում է ՀՀ-ում բնության հուշարձանների ցանկը՝ ըստ հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N 71-Ն** «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» (հունվարի 29, 2010 թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N72-Ն** «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին որոշումը» (հունվարի 29, 2010 թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:

- **ՀՀ կառավարության որոշում 596-Ն** (19 մարտ, 2015 թ.) ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանում է կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում 426-Ն** (12 ապրիլի, 2018 թ.), «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգոխնայողության և էներգոարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին», որը սահմանում է համապատասխան տեխնիկական կանոնակարգի՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-1243-Ն** (30 նոյեմբերի, 2015 թ.) «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին», որը սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն** (28 դեկտեմբեր, 2020 թ.) ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին հաստատում է ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն** (24.03.2016) «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն** (28.03.2017) «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն** (19.09.2012) «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»

- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 103-Ա ՀՀՇՆ31-03.01-2014** «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա (05.04.2018)** «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» (<https://www.minurban.am/storage/Normative/43-A.pdf>):
- **ՀՀ կառավարության որոշում 438 (20 ապրիլի, 2002 թ.)** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին» հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը:

Միջազգային համաձայնագրեր.

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Ուղեցույցներ և ստանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում

Է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1. Նախատեսվող գործունեության համառոտ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրում:

Հողամասի մակերեսը կազմում 1.2 (հա)՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (կադաստրային ծածկագիր՝ 05-073-0012-0002): Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ինչպես նաև տարածքի շրջադարձային կոորդինատները (WGS-84 կոորդինատային համակարգով) ներառված են ՇՄԱԳ փաթեթում:

Վերջինիս համաձայն ստորև ներկայացվում են տարածքի հետ կապված որոշ տվյալներ, մասնավորապես.

- հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ կրթահամալիրի կառուցման
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի/կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը և Վարդենիսի համայնքապետարանի կողմից 02.10.2024թ. տրված N 81 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը), որը բերված է հավելված 6-ում):

Շատվանի կրթահամալիրը նախատեսվում է կառուցել վերոհիշյալ վկայականի սահմաններում գոյություն ունեցող հողամասի սահմաններում, որի կառուցումից հետո գոյություն ունեցող դպրոցի շենքը նախատեսվում է ապամոնտաժել: Գոյություն ունեցող ամենամոտ շինությունները, հասարակական օբյեկտները, ենթակառուցվածքները ներկայացված են իրադրային սխեմայում (տես՝ հավելված 5) :

Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ՀՀՇՆ 31-03-2018 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թ. հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»
- ՀՀՇՆ II-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»

- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»
- СНиП 2.01.07-85 «Բեռնվաճքներ և ազդեցություններ»
- СНиП 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»
- СНиП 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Համաձայն նախագծային լուծումների նոր դպրոցը նախատեսված է 144 աշակերտի համար:

Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է՝ 1999 ք/մ, ջերմոցինը՝ 32 ք/մ, մարզադաշտը՝ 1125 ք/մ, հողամասի ընդհանուր մակերեսը՝ 16,755 ք/մ, բետոնե դեկորատիվ սալիկները՝ 1245 ք/մ, ասֆալտապատումը՝ 1660 ք/մ, կանաչապատում՝ 10,694 ք/մ (Ճարտարապետահատակագծային առաջադրանքը տես՝ հավելված 6):

Դպրոցները նախագծվել են Հայաստանի գյուղական վայրերի համար:

Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկամի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունի դահլիճի մասնաշենքից ու երկհարկանի մանկապարտեզից:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.70x18.0մ :

Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ:

Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության կաբինետ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը:

Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4մ, որը օգտագործվելու է որպես թաքստոց:

Նկուղային հարկում տեղավորվել են գրադարանը, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան: Թաքստոց տանող աստիճանը հազեցված է աստիճանային ամբարձիչով հաշմանդամների համար:

Բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունի հարկերը կապող միջհարկային ամբարձիչ համար:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսոլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար :

Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից չորս խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ: Երկրորդ հարկում նույն կազմն է միայն վարիչի և բժշկի սենյակի փոխարեն ավելացել է հանդիսությունների սենյակ:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Ճակատի խարսխային մասը երեսապատված է բազալտե սալերով:

Նախագծով նախատեսված է ճակատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկաձածկույթով:

Մարզասրահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենքի մուտքերը շեշտված են ֆիբրոցեմենտային այլ երանգի սալերով:

Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է:

Արտաքին դռները այլումինե ջերմակամրջակով են ներկված մուգ մոխրագույն գույնով:

Արտաքին պատուհանագոգերը, հովհարը, քիվերը, դռների և պատուհանների շեպերը երեսապատել այլուկաբոնդով: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է 4.0 x 8.00 ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք:

Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է:

Նախագծվող դպրոց-մանկապարտեզի տեխնոլոգիական մասի համար հիմք են ծառայել ճարտարապետա-շինարարական գծագրերը և ՀՀ տարածքում գործող շինարարական դրույթները:

Շենքը բաղկացած է երկու հարկանի դպրոցից և երկու հարկանի մանկապարտեզից: Մանկապարտեզի համար նախատեսված է ամբարձիչ:

Տարածքների կազմը և մակերեսները, շենքի հատակագծային կառուցվածքը ապահովվում է 1-12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպումը:

Ելնելով տարածքների խմբավորումից, դպրոցի շենքը նախագծված է հետևյալ կերպ՝

1-12-րդ դասարանների դասավանդումը կազմակերպված է առաջին և երկրորդ հարկերում: Դասասավանդումը առանձին առարկաների գծով անցկացվում է ընդհանուր ուսումնական կաբինետներում: Կաբինետները կահավորված են ցուցադրական և աշակերտական լաբորատոր սեղաններով: Քիմիայի լաբորատորիայում տեղադրված է օդաքաշ պահարան: Լաբորատոր սեղանները համալրված են վարդակներով, քիմիա լաբորատոր սեղանները լրացուցիչ համալրված են ջրի ծորակներով:

Դասարանները նախատեսված են 12 աշակերտի համար:

Շենքի առաջին հարկում գտնվում են գլխավոր նախամուտքը, պարետի և վարչական սենյակները: Դպրոցը ապահովված է բժշկի կաբինետով, որը կահավորված է անհրաժեշտ բժշկական կահույքով:

Նախատեսված է մարզասրահ 60 տեղանոց տրիբունայով, հանդերձարաններ սանհանգույցով, առանձնասենյակ և գույքի պահեստ:

Առաջին հարկում գտնվում է հանդիսությունների դահլիճը 144 տեղով իր հանդերձարանով, որը հնարավորություն է տալիս անցկացնել երգի, թատերական, երաժշտական և պարարվեստի խմբակային դասընթացներ:

Նույն հարկում նախատեսված է բուֆետ բաշխման տարածքով:

Դպրոցի երկրորդ հարկում նախատեսված են դասարաններ, ինֆորմատիկայի կաբինետ, ռազմագիտության դասարան և ռոբոտաշինության կաբինետ:

Դպրոցի նկուղում (թաքստոց) տեղակայված է ավանդական գրադարան գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրված են համակարգիչներ և պատճենահանման սարքավորում: Նույն հարկում է գտնվում էլ, կաթսայատունը, էլ. վահանակը, սանհանգույցներ, բուժկետ:

Դպրոցին կից նախագծված է 2 հարկանի մանկապարտեզ, բաղկացած 4 հատ 20 տեղանոց խմբակային բջիջներից: Խմբերը համալրված են հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սանհանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական շենքեր:

Երաժշտա-մարմնամարզության դահլիճը նախատեսված է երկրորդ հարկում:

Մանկապարտեզի և դպրոցի երեխաների սննդի մատակարարումը կազմակերպվում է դպրոցի բուֆետից : Պատրաստի սնունդը ներմուծվում է, դպրոցի բուֆետի խոհանոցի տարածքում տաքացվում է և բաշխվում մանկապարտեզի և դպրոցի երեխաների միջև:

Մանկապարտեզի երեխաների սննդի մատակարարումը կազմակերպվում է մանկապարտեզի բուֆետից, որը առկա է բոլոր խմբակային բջիջներում: Նույն բուֆետում նախատեսվում է սպասքի լվացում և պահպանում:

Աշակերտների սննդի մատակարարումը կազմակերպվում է դպրոցի բուֆետից, իսկ բաշխում բուֆետի վաճառատեղանից:

Սպասքի և խոհանոցի ամանների լվացման համար նախատեսված է օգտագործել լվացարաններ:

Դպրոցի և մանկապարտեզի բոլոր սենյակները կահավորված են համապատասխան սարքավորումներով և կահույքով:

4.2. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ

Նոր դպրոցի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթների, շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,
- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пенopleкс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

4.3. Էլեկտրամատակարարում

Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, էլեկտրամատակարարման համար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ բոլոր կոմունիկացիաներն արդեն առկա են ու պայմանները չեն փոխվում: (Տես ` հավելված 9)

Էլեկտրամատակարարում: Դպրոցի նոր կառուցվող շենքի էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է համաձայն ՀՀՇՆ22-03-17, ՄՆԻՊ 3.05.06-85 դրույթների: Ըստ հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառիչները դասվում են երկրորդ կարգի: Նախագիծը կատարված է ճարտարապետա-շինարարական գծագրերի և հարակից բաժինների կողմից ներկայացված առաջադրանքների հիման վրա: Նախատեսվում է 0.4կՎ լարման սնող 2 մալուխների (1 մալուխը պահուստային) ներանցում -3.60 նիշում գտնվող էլ. վահանայինի սենքում տեղակայված փնջային փոխարկիչ: Էլ. լուսավորության ցանցը

նախատեսված է հետևյալ տեսակների. աշխատանքային, վթարային, տարհանման, վերանորոգման:

Բաշխիչ վահաններից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով, որոնք տեղադրվում են դակված մալուխների վրա: Խմբային ցանցը իրականացվում է պղնձե չիրկիզվող ԹԹժՎՆ-LS մակնիշի մալուխներով, անցկացված ճկուն խողովակների մեջ: Նախատեսված են լուսադիոդային լուսատուներ համապատասխան հզորություններով: Անջատիչները և վարդակները դասասենյակներում տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա, այլ սենքերում՝ հատակից 0.8մ, վահանները՝ 1.5մ բարձրության վրա հատուկ պատրաստված խորշերի մեջ: Կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի կաբինետներում յուրաքանչյուր սեղանի տակ նախատեսված է հատակի մեջ տեղադրվող տուփ սեղանների վրա տեղադրվող վարդակների համար: Հաղորդագծերը նախատեսված են պղնձե մալուխներով, տեղադրված խողովակների մեջ: Վերջիններս տեղադրվում են բետոնե հատակի տակ մալուխատարերով: Ցանցի ղեկավարումը իրականացվում է ուսուցչի վահաններից: Նախատեսված է տանիքի ջրհավաք ձագարների ջեռուցում: Օդափոխության սարքերի և պոմպերի սնող գծերը նախատեսված են պղնձե մալուխներով: Հրդեհի դեպքում օդափոխության ցանցը անջատվում է: Նախատեսված են անկախ խզիչներ: Որպես անվտանգության լրացուցիչ միջոց նախատեսվում է հողանցման օջախ 4.0 օհմ դիմադրությամբ: Էլեկտրաէներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվում է հինգ հաղորդալարերով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում^a երեք հաղորդալարերով (L1N,PE), անցկացնելով առանձին PE հաղորդալար, սկսած մուտքի վահանից: Նախատեսված է կաթսայատան և կոյուղու մաքրման ցանցերի էլ.սնուցում ԳԲՎ-1 և ԳԲՎ-2 բաշխիչ վահաններից: Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարել համաձայն գործող էլեկտրատեխնիկական կանոնների և նորմերի:

Արևային վահանակների տեղադրում: Դպրոցին պատկանող տարածքում 174,9 կՎտ պիկային հզորության արևային ֆոտովոլտային համակարգի նախագծման համար հիմք են հանդիսացել.

1. Տեղանքի հատակագծերը
2. Տեղազնման արդյունքները
3. Տեխնիկական առաջադրանքը

Նախագծով նախատեսվում է 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում մոդուլային կրթահամալիրների տարածքում:

Տեղանքում Հորիզոնական ճառագայթումը $1337 \text{ կՎտ} \cdot \text{ժ} / \text{մ}^2$ է: Տարվա մեջ անարև օրերի քանակը 63 օր է: Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները համապատասխանաբար 35°C և -20°C է: Օրվա մեջ առավելագույն տեղումները (ձյուն) 65 մմ է: Քամին Հարավ-արևելյան է: 20 տարվա մեջ 1 անգամ հնարավոր քամու առավելագույն արագությունը 34 մ/վ է:

ՖՎ վահանակները տեղակայվելու են գրունտային մակերևույթին՝ դեպի հարավ ուղղորդված, 30° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 318 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների ԱՀԿՈՒ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 50 կՎտ է /Եռաֆազ/:

ՖՎ կայանի հենակառուցվածքը մոնտաժվում է նախապես կառուցված երկաթբետոնային հիմքերի վրա՝ զոդման միջոցով: ՖՎ կայանի հենակառուցվածքը կազմված է հակակոռոզիոն ներկով պատված պողպատե խողովակներից:

Փոխակերպիչը և ՓՀՀՏ-ն տեղադրվում են հենակառուցվածքի վրա հատկացված հատվածում: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն ենթակայանից սնվող մալուխով էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները մոնտաժվում են հենակառուցվածքի վրա ձգման, իսկ շարքից շարք խրամուղով անցկացման եղանակով: Խրամուղու մեջ մալուխները անցկացվում են կոյուղու խողովակների մեջ:

ՖՎ կայանի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

ՖՎԿ-ի համար կառուցվում է հողանցման կոնտուր: Չափումների արդյունքում դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմը, այլապես ավելացնել հողանցիչներ:

4.4. **Ջրամատակարարում և ջրահեռացում**

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) համաձայն:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև ճարտարապետա-շինարարական գծագրերը, գլխավոր հատակագիծը, տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները: Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են՝

- ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:
- ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինություններ հրդեհային անվտանգություն:

Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, ջրամատակարարման և ջրահեռացման համար նոր տեխնիկական պայմանի ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում, պայմանները չեն փոխվում: **Նախագծվող շենքի ջրամատակարարման համակարգը սնվում է համայնքային ջրագծից: (Տես՝ հավելված 8)**

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Տաք ջրամատակարարում
- Հրդեհամարման համակարգ
- Կենցաղային կոյուղի:

Ջրամատակարարում: Նախագծվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից $2 \times (1.7 \times 2.3 \times 1.8 \text{մ } W=7 \text{մ}^3)$, որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում Wilo SiBoost Smart 4 HelixVE 404 , $Q=5.0 \text{լ/վրկ}$, $H=30.0 \text{մ}$, $N=4 \times 0.75 \text{կՎտ}$, $3\text{՝}400\text{V}$: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Հրդեհամարման համակարգ: Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով: Համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված ռեզերվուարներից $2 \times (1.7 \times 2.3 \times 1.8 \text{մ } W=7 \text{մ}^3)$, որոնցում առկա է հրդեհամարման անհրաժեշտ ծավալը: Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման $\emptyset 76 \times 3 \text{մմ}$ և $\emptyset 57 \times 3 \text{մմ}$ տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից: Հրշեջ պահարանները համալրված են հրշեջ ծորակներով և $l=20.0 \text{մ}$ երկարության փողրակներով:

Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային /մոդուլային/ շենքի աշխատանքային գծագրերը կատարվել են ճարտարապետաշինարարական հատակագծերի և տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Նախագծի մշակման համար օգտագործվել են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը՝

- ՀՀՇՆ II-8.04-02-2005 - «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏԻԿԱ»:

➤ ԷՍԿ - «ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՍԱՐՔՎԱԾՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ»:

Ավտոմատ հրդեհի ահազանգման համակարգը նախատեսված է՝

- ազդարարման համակարգի միացման համար:
- հրդեհի կենտրոնի հայտնաբերման համար:
- օդափոխության և ծխահեռացման համակարգերի ղեկավարման համար:

Համակարգը բաղկացած է ընդունիչ հսկիչ սարքից՝ РУБЕЖ-20П R3 մակնիշի /2 օղակ, ամեն օղակին մինչև 250 հասցեային տվիչներ և այլ հասցեային սարքավորումներ միացնելու հնարավորությամբ/ պատի վրա տեղակայման բարձրությունը $h=1500$ մմ: Վահանակին միացվում են հասցեային օպտիկական ազդասարքերը, հասցեային շարժման և մագնիսակոնտակտային ազդասարքերը, հասցեային հրդեհի՝ ձեռքով՝ գործարկվող ազդասարքերը, հասցեային լուսաձայնային ազդարարիչները, հասցեային ինտերֆեյսային մոդուլը, հասցեային սարքը՝ անալոգային ազդասարքերը հասցեային սարքին միացնելու համար, ռելեների մոդուլները՝ ահազանգի դեպքում կատարող մեխանիզմներին գործարկելու համար:

Հրդեհի ահազանգման համակարգի ընդունիչ հսկիչ սարքը տեղակայվում է շինության առաջին հարկում /0,100 նիշ/ գտնվող պահակակետում, որտեղ իրականացվում է շուրջօրյա հերթապահություն: Ընդունիչ հսկիչ սարքը համալրված է ԱԻՆ միանալու բջջային կապով աշխատող ավտոմատ զանգահարող սարքով:

Տվյալ շինությունում բացառությամբ սանհանգույցների, թաց գործընթացով և $2m^2$ պակաս մակերեսով սենքերի, բոլոր տարածքներում նախատեսված են հասցեային ծխի ազդասարքեր, իսկ միջանցքներում, էվակուացիոն ելքերի և աստիճանավանդակների մոտ նախատեսված են հրդեհի հասցեային ձեռքի ազդարարիչներ / $h=1500$ մմ/: Մարզասրահում նախատեսված են ծխի գծային ազդասարքեր ռեֆլեկտորով, ազդասարքերը տեղակայվում են $h=5400$ մմ բարձրության վրա պատի վրա, իսկ ռեֆլեկտորները $h=7200$ մմ բարձրության վրա ազդասարքի դիմացի պատին:

Շինության ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսված են լուսաձայնային ազդարարիչներ՝ ահազանգի դեպքում լուսաձայնային ինդիկացիայի համար, տեղակայման բարձրությունը $h=2800$ մմ:

Շինության նկուղային և հարկում նախատեսվում է հասցեային ռելեային մոդուլ՝ տեղակայման բարձրությունը $h=1600$ մմ, հրդեհի ահազանգի դեպքում վերելակի ղեկավարման, օդափոխության համակարգի ներածման սարքավորումները հրդեհի դեպքում ավտոմատ անջատելու, ծխահեռացման կափույրների ակտիվացման համար:

Ռեզոնանսային դասասենյակում և զենքի պահոցում նախատեսվում է դռների բացման հասցեային մագնիսական կոնտակտներ և շարման հայտնաբերման հասցեային ազդասարքեր՝ տեղակայման բարձրությունը $h=2300$ մմ, որոնք միանում են հրդեհի ահազանգման համակարգի հասցեային օղակին և ղեկավարվում են հասցեային ինտերֆեյսային մոդուլին միացված պրոքսիմիթի քարտերի ընթերցիչ սարքի՝ տեղակայման բարձրությունը $h=1600$ մմ, միջոցով:

Բոլոր հասցեային ազդասարքերի, ազդարարիչների և այլ հասցեային միավորների միացումը հասցեային օղակին կատարվում են КСРЭВНГ(А)-FRLS 2x0.50 այրում չտարածող մալուխներով և նրանց սնումը կատարվում է հասցեային օղակից: Մալուխները անց են կացվում պատերի և առաստաղի վրայով բաց կամ սվաղի տակ:

Համաձայն գործող նորմերի հրդեհի ահազանգման համակարգի էլեկտրասնուցումը հուսալիության տեսանկյունից վերագրվում է 1-ին կատեգորիայի: Այդ պատճառով էլեկտրասնուցումը կազմակերպվում է անխափան սնուցման աղբյուրներից:

Հիմնական սնուցումը 220Վ 50Հց:

Պահուստային սնուցումը՝ 2 հատ մարտկոցներից՝ 12Վ 7Ա:

Հիմնական սնուցման բացակայության պայմաններում մարտկոցները թույլ են տալիս համակարգի աշխատունակությունը պահպանել հերթապահ ռեժիմում 24 ժամ, իսկ ահազանգի ռեժիմում 3 ժամ:

Էլեկտրասարքավորման պահպանիչ հողանցումը պետք է իրականացվի ԷՍԿ-ի համաձայն: Կենցաղային կոյուղի: Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատավթի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանում կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում: Wilo DrainLift BOX-32/11HD, Q=2.01/վրկ, H=6.00մ, N=0.75կՎտ, 1~ 230 V):

Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

Տեսահսկման համակարգ: Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային /մոդուլային/ շենքի աշխատանքային գծագրերը կատարվել են ճարտարապետա-շինարարական հատակգծերի և տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Տեսահսկման համակարգը բաղկացած է արտաքին և ներքին օգտագործման ընդհանուր քանակով 29 IP տեսախցիկներից, որոնցից 17 տեղակայվում են շինության ներսում՝ միջանցքներում և մուտքերի մոտ՝ առաստաղին, 12 շինության արտաքին հատվածում՝ տեղակայման բարձրությունը $h=3000$ մմ, մուտքերը և հարակից տարածքները հսկելու համար: Բոլոր տեսախցիկներից ստացվող տեսանյութերը տեսագրվում են 32 տեսամուտքով ցանցային տեսագրող սարքի հիշողության մեջ: Ցանցային տեսագրող սարքը համալրվում է 1 հատ 8 ՏԲ ծավալով կոշտ սկավառակով, որի վրա պահպանվող տեսանյութերի արխիվը կարող է պահպանվել մինչև 14 օր:

Տեսադիտարկումը իրականացում է 32’’ LED մոնիտորի մոտ: Հեռահար դիտման համար օգտագործվում է մոնիթորինգի համար նախատեսված հատուկ ծրագրով համակարգչով կամ հեռախոսով: Բոլոր տեսախցիկների էլ. սնուցումը նախատեսվում է իրականացնել կենտրոնացված՝ պահակակետում տեղադրվող PoE սնուցմամբ ցանցային կուտակիչից:

Միացումը տեսախցիկից մինչև ցանցային տեսագրող սարք իրականացվում է UTP Cat5e մակնիշի մալուխով, որով էլ նաև իրականացվում է տեսախցիկների սնուցումը: Մալուխների միջանցքներում և հորաններում անց են կացվում հեռահաղորդակցման ցանցերի համար նախատեսված մետաղական մալուխատարերով:

4.5. **Ջեռուցում և օդափոխություն**

Ջեռուցում: Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագիծը կատարվում է ճարտարապետական գծագրերի շինարարական նորմերի հիման վրա

- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում»
- ՀՀՇՆ 24-01-2016 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների»
- ՀՀՇՆ II-Պ. 8-71 «Հասարակական սննդի ձեռնարկություն»
- ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»
- ՀՀՇՆ 31-06-2009 «Հասարակական շենքերի և կառույցների»:

Հատակագծում ջեռուցումը նախատեսված է էլեկտրկան յուղային ռադիատորներով: Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, երկհարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ:

Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են ալյումինե ռադիատորներ, բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

Սենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի: Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով :

Մանկապարտեզում և դպրոցում մատակարար խողովակը անցնում է ձեղնահարկով, իսկ հետադարձը՝ +0.100 նիշի հատակի միջով: Սպորտ սրահում և հանդիսությունների դահլիճում մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով : Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև

ջերմամեկուսիչով: Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքում: Համակարգերից ջրի դատարկումը կատարվում է կաթսայատնից:

Օդափոխություն: Դպրոցի օդափոխության համակարգը նախատեսված է ՀՀ գործող նորմերին համապատասխան: Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ: Էներգաարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր՝ ռեկուպերատորով: Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական՝ էլ. շարժաբերով: Փականը բլրկված է արտածման օդափոխիչի հետ: Սանհանգույցներից կազմակերպված են մեխանիկական դրդմամբ արտածման համակարգեր: Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով: Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից:

4.6. Բարեկարգում և կանաչապատում

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն:

Տարածքի 10,694 ք/մ-ն նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով:

Տնկարկն իրականացնելու համար կմշակվեն համապատասխան խորության և տրամագծի փոսորակներ: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպջողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով: **Կանաչապատ տարածքները ոռոգելու նպատակով նախագծով նախատեսված է ոռոգման ռեզերվուարի տեղադրում, որը պարբերաբար կլիցքավորվի համայնքային ջրատարներից՝ ըստ սահմանված պահանջների և տեխնիկական պայմանների:**

4.7. Շինարարական և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- նոր դպրոցի շենքի և կաթսայատան կառուցում,
- գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժում,
- նոր դպրոցի կառուցապատումից ազատ տարածքների և ապամոնտաժված դպրոցի տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Շինարարական հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում, որի կազմակերպման համար հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես.

- տարածքի ժամանակավոր ցանկապատում,
- շին. հրապարակի լուսավորության ապահովում,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքեր՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, բիոզուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն),
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը,
- շին. աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Կառուցապատման և ապամոնտաժման գործողությունների նկարագրությունները բերված է ստորև ներկայացված ենթաբաժիններում:

- Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վարձակալել դրանք:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի

տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլտվությամբ: Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին,
- ժամանակավոր շինությունների և ինժեներական ցանցերի տեղադրում,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում:

Դպրոցի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից: Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պատահումներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները և հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից:

Շինարարության ժամանակացույցը բերված է հավելված 7-ում: Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես նախատեսվող գործունեության վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի դպրոցի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհի ետնամասով, ինչը թույլ է տալիս, որ շին. տեխնիկայի շարժը որևէ կերպ չխոչընդոտի գործող դպրոցի բնականոն առօրյային և դպրոցի հարակից տարածքի երթևեկությանը:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շին. աշխատանքների ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող

հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

- Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքներն իրականացվելու են ՀՀ կառավարության N 2093-Ն (30.11.2023) որոշման համաձայն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188045>: Սույն որոշման կետ 2-ով սահմանված կարգով դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացող շինանյութեր սեփականության իրավունքով անհատույց կհանձնվի դպրոցի կառուցման աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպությանը: Հետևաբար ապամոնտաժման աշխատանքների ծավալները հաշվի առնված չեն դպրոցի ծավալա-նախահաշվային փաստաթղթերում: Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի տեղափոխման աշխատանքները նույնպես կիրականացվեն շինարար կապալառուի սեփական միջոցների հաշվին:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով, վերոնշյալ որոշման համաձայն և սույն նախագիծը չի ներառում նաև ապամոնտաժման աշխատանքների նախագծումը: Քանդման աշխատանքներն ապամոնտաժման եղանակով իրականացնելու դեպքում հնարավոր կլինի խուսափել բնապահպանական ազդեցություններից, մասնավորապես, աղմուկի և փոշու բարձր մակարդակների առաջացումից և կկրճատվի շինարարական աղբի ծավալները, քանի որ վերը նշված որոշման համաձայն՝ շինարարական կազմակերպությունն ապամոնտաժման աշխատանքները կկազմակերպի այնպես, որ առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի շինարարական նյութերը կպահպանվեն և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և զոդման տեխնիկա՝ բացառելով այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Շենքի ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլ առ փուլ: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժումը, քանի որ նշված հումքը ենթակա է կրկնակի օգտագործման, որից հետո կիրականացվեն սկզբում երկրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև՝ կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվի առաջին հարկի ապամոնտաժումը: Ծածկերի և միջհարկային սալերի ապամոնտաժումը կիրականացնի զոդման միջոցով, որից հետո անջատված սալերը և սյուները ճոպանների միջոցով կմիացվեն թրթուռավոր կռունկին և դանդաղ կտեղափոխվեն հրապարակի ազատ տարածություն:

Ապամոնտաժումից առաջացած շինարարական աղբը, որի ծավալը գնահատվում է շուրջ 2500 տ, կտեղափոխվի Վարդենիսի համայնքապետարանի կողմից նախատեսված վայր:

Ապամոնտաժվող դպրոցի մակերեսը կազմում է՝ 1762 ք/մ, քանդման եղանակը մեքենամեխանիզմն է, տանիքի ծածկույթը ծալքաթիթեղ, կրող դետալները փայտանյութ: Կրկնակի օգտագործման հումքեր առկա չէ:

4.8 Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Տեխնիկական միջոցների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1.	մորիլային վերամբարձ կռունկ	XCT25L5_S	2
	հիմնական վերամբարձ մեխանիզմի հնարավոր այլ տարբերակներ	DK 250 (թրթուրավոր) КС 55713 -6 ГАЛИЧАНИН	
2.	էքսկավատոր՝կախովի սարքավորումներով	ET-14 (կամ նմանատիպեր)	1
3.	ավտորետոնապոմպ	SCHWING S36 SX	1
4.	բուլդոզեր	CAT CS 563 (կամ նմանատիպ)	
5.	գլդոն	CAT D6R (կամ նմանատիպ)	
6.	թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ -91А	2
7.	թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ -102А	2
8.	փոխարկիչ թրթռիչների համար	ИВ - 4	2
9.	դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ -4709А	1
10.	եռակցման տրանսֆորմատոր	ТД -500	2
11.	տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
12.	փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
13.	հետահար մուր		1
14.	քվտոինքնաթափ		ըստ հաշվարկի
15.	ավտորետոնախառնիչ	СБ69Б	ըստ հաշվարկի

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդարկական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Ապամոնտաժման աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 3 ամիս:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 23 ամիս: (Տես՝ հավելված 7)

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների միջինը քանակը գնահատվում է 30 մարդ, իսկ առավելագույն քանակը՝ 50 մարդ, որից.

- ինժինեռատեխնիկական անձնակազմ՝ 5 մարդ,
- բանվորներ՝ 45 մարդ (ներառյալ՝ օժանդակ տնտեսությունները):

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը

Ընտազուովող տեղամասը տեղակայված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան գյուղի վարչական տարածքում:

Գեոմորֆոլոգիական: Շատվանը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի տարածքում՝ Սևանի լճի արևելյան կողմում: Շատվանի գեոմորֆոլոգիան ընդգրկում է լեռնային և բլուրային լանդշաֆտներ՝ քարքարոտ ու կիսաանապատային միջավայրով: Տարածքը հարուստ է բազալտային ժայռերով և մթնոլորտային էրոզիայի պատճառով ձևավորված խոր ճորերով: Շատվանի շրջակայքում լանդշաֆտը հիմնականում կազմված է բազալտային ու հրաբխային ժայռաբեկորներից, քանի որ Վարդենիսի լեռները մոտակա վայրերում ունեն հրաբխային ծագում: Տարածքը աչքի է ընկնում կտրուկ լանջերով, որոնց վրա կարելի է նկատել քերծեր, քարափներ և էրոզիայի ձևավորված տարբեր ժայռային ձևեր:

Խիտ բուսածածկը համեմատաբար քիչ է, և հիմնականում հանդիպում են խոտաբույսեր ու ցածր աճող թփեր, որոնք հարմարվել են չոր և քամոտ պայմաններին:

Շատրվանից կարելի է տեսնել հիասքանչ տեսարան դեպի Սևանա լիճ, որը տարածքի էկոլոգիական կարևոր մասերից մեկն է:


Կլիմա: Շատվանի կլիման բնութագրվում է որպես բարձրալեռնային ցամաքային կլիմա՝ զով ամառներով և խստաշունչ ձմեռներով: Տարածքը գտնվում է բավականին բարձրության վրա, ինչը ազդում է միջին ջերմաստիճանների և տեղումների քանակի վրա:

Տեղումների քանակը համեմատաբար քիչ է, ինչը տարածքին տալիս է կիսաանապատային բնույթ: Ձմռան ամիսներին տարածքում առկա են ձնաբքի վտանգներ, իսկ գարնան ու աշնան ամիսներին հաճախ են ուժեղ քամիները, որոնք նպաստում են էրոզիոն պրոցեսներին:

«Շինարարական կլիմայաբանություն» ՀՀԸՆ 22-01-2024 շինարարական նորմերի համաձայն՝ ստորև ներկայացված են օդերևութաբանական դիտարկումներով պայմանավորված որոշ կլիմայական տվյալներ ՀՀ շրջակա միջավայրի պահպանության հիմնարկների և Հիդրոմետ ծառայության կողմից հրապարակված կլիմայական ցուցանիշների հիման վրա:

Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով ըստ «Մասրիկ» և «Վարդենիս » օթերևութաբանական կայանների տվյալների

- Տարեկան միջին ջերմաստիճանը 5.6°C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 30°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -29°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 71
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 66
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 47
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 580-650մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 3.1մ/վ :
- 25 տարվա ընթացքում հնարավորն են 27մ/վրկ, 50 տարվա մեջ 30մ/վ ուժգնության քամիներ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 75սմ (Մասրիկի կայան):



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Մարտունի	-5.2	-4.9	-1.3	5.0	9.8	13.4	16.4	16.3	13.2	8.4	2.5	-2.6	5.9	-31.7	33.6

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %				
	ըստ ամիսների		Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական	Միջին ամսական	Միջին ամսական, 15-ին ժամը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Մարտունի	68	69	68	66	67	70	73	71	66	64	65	66	68	68	61	73	54

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Մարտունի	27	31	47	59	74	69	46	31	32	43	38	25	522	168	354
	51	34	40	46	41	69	65	43	59	49	84	41	84		

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անրորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Ռստ ուղղությունների													
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Մարտունի	հունվար	5	1	1	2	49	37	3	2	85	3.7	Հվ	1.7	ՀվԱրմ	4.0
		1.7	1.7	1.6	2.2	3.6	4.0	2.4	2.2						
	ապրիլ	11	5	3	2	40	30	5	4	78	2.9				
		1.9	2.0	1.7	2.2	3.4	3.8	2.4	2.0						
հուլիս	30	12	4	1	20	17	5	11	71	1.6					

		2.0	2.1	1.8	1.5	1.7	1.9	1.8	2.0						
	հոկտեմբեր	5	46	6	3	4	17	10	3	43	1.5				
		1.7	2.2	1.9	1.7	1.4	1.7	1.4	1.4						

Աղյուսակ 5. Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ.ա. / մ.ն.	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Մարտունի	մ.ա.	-0.7	-0.1	3.6	10.4	15.6	19.4	22.1	22.2	19.4	13.9	7.2	1.7	11.2
	մ.ն.	-8.8	-8.9	-5.3	0.5	4.7	7.8	10.9	10.6	7.3	3.4	-1.4	-6.1	1.2

Շրջանի գեոմորֆոլոգիան: Ուսումնասիրվող տարածքը առանձնանում է ռելիեֆի բազմազանությամբ և մասնատվածությամբ:

Տարածքի կառուցվածքա-դենուդացիոն ռելիեֆը ստեղծվել է ծալքավոր հիմքի վրա, տեղ-տեղ բարդացված տեկտոնական խախտումներով:

Տարածքի կառուցվածքում հիմնականում մասնակցում են նստվածքային և հրաբխանստվածքային ապարները: Նստվածքային ապարները ներկայացված են ռելիեֆի գրահապատված ձևերում, իսկ ռելիեֆի հարթեցված ձևերը պայմանավորված են հրաբխանստվածքային ապարներով:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են տարատեսակ հրաբխանստվածքային, հրաբխային և նստվածքային ապարներ, որոնք հաճախ ծածկվում են ծածկոցի տեսքով չորրորդականի ջրաբերներով և փխրունաբեկորային առաջացումներով:

Հիդրոլոգիական պայմանները: Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավալորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով դրանից, հետազոտվող տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լճի մեջ: հորատանցք 1-ում 3.0-3.8մ-ում, հորատանցք 2-ում 2.7-3.5մ-ում, հորատանցք 3-ում 3.0-4.0մ-ում, հորատանցք 4-ում 4.0-5.0մ-ում, հորատանցք 5-ում 4.5-5.3մ-ում :

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, բացակայում են:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տարածքը գտնվում է I I սեյսմիկ գոտում : Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.4g:



Տարածքի երկրաբանական նկարագրությունը: Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով ֆոնդային նյութերի համադրմամբ, գրունտների լաբորատոր հետազոտությամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

- **Շերտ 1** Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցնով : Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն I(9ա) կարգ է: Ավազակավի, կավավազի առկայությունը խոչընդոտում է տարածքում հողի բերրի շերտի ձևավորմանը:
- **Շերտ-2 Կավ** պինդ թանձրությամբ, բացից մինչև մուգ շագանակագույն,խճի և մանրախճի պարունակությամբ 10-15%, մանրամիջահատիկ, հոժ: Էյուվիալ-Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն III (8^ա) կարգ է:
- **Շերտ-3** Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ մանրաբեկորների պարունակությամբ ավազակավային, կավավազային լցնումով 20-35%: Լցնումը մուգ, շագանակագույն, սպիտակահողագույն, պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (13) IV կարգ է :

5.2 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածության մոնիտորինգն իրականավում է «Հիդրոօբերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի էլքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ

դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Վարդենիս համայնքը, որը գտնվում է Գեղարքունիքի մարզում, հարուստ է ջրային ռեսուրսներով: Ահա համայնքի հիմնական ջրային ռեսուրսների համառոտ նկարագիրը:

1. Սևանա լիճ

Վարդենիս համայնքի տարածքը հարում է Սևանա լճին՝ Հայաստանի խոշորագույն քաղցրահամ ջրային ռեսուրսին: Լիճը կարևոր է ոչ միայն խմելու և ոռոգման ջրի ապահովման, այլև ձկնաբուծության, զբոսաշրջության և էկոհամակարգի պահպանման համար:

2. Գետեր

5.3 Մասրիկ գետ

Հոսում է Վարդենիս համայնքի տարածքով՝ մատակարարելով ոռոգման և կենցաղային ջուր: Գետը կարևոր է գյուղատնտեսական նպատակներով:

5.4 Սոթք գետ

Սկիզբ է առնում Արևելյան Սևանի լեռնաշղթայից և հոսում է Վարդենիսի մոտակայքում՝ նպաստելով համայնքի ջրային ապահովմանը:

3. Արտեզյան ջրեր և աղբյուրներ


Վարդենիսի տարածքում կան բազմաթիվ բնական աղբյուրներ, որոնք ապահովում են մաքուր ջուր թե՛ խմելու, թե՛ ոռոգման համար:

4. Զրամբարներ և ջրային կառույցներ

Համայնքում տեղակայված են փոքր ջրամբարներ և ոռոգման համակարգեր, որոնք աջակցում են գյուղատնտեսության զարգացմանը:

Այս ջրային ռեսուրսները կարևոր նշանակություն ունեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանման համար:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:



Սևանի ԶԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային. 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Չեռ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.24	0.33	73	0.20	0.36	56	0.22	0.24	92
Մասրիկ	Ծովակ	1.90	2.98	64	1.81	2.88	63	2.00	2.66	75
Մարտունի	Գեղիովիտ	0.59	0.79	75	0.56	0.82	68	0.61	0.76	80
Արգիճի	Վ. Գետաշեն	2.56	2.33	110	2.68	2.47	109	2.83	2.38	119
Գավառագետ	Նորատուա	2.07	2.93	71	2.08	3.01	69	2.21	2.99	74

Մակերևութային ջրերի որակ Սևանի ԶԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում: Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Սոթք գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հոկտեմբերին

գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ծակքար գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): «Հայիդրոմետ» ՊՈԱԿ 69 Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

5.3 Հողօգտագործում և հողային ռեսուրսներ

Շատվան բնակավայրի հողային ռեսուրսները հիմնականում պայմանավորված են լեռնային ռելիեֆով և հողային կազմի տարբերությամբ: Տարածքի հողօգտագործումը բնորոշվում է մի շարք կարևոր հատկանիշներով, որոնք ազդում են գյուղատնտեսության, բնակավայրի զարգացման և բնական ռեսուրսների պահպանման վրա:

1. Հողերի կազմություն: Շատվանի տարածքում հողերը հիմնականում բաղկացած են հրաբխային ծագում ունեցող լեռնային-անտառային և լեռնային մարգագետնային հողերից: Այս հողերը ունեն լավ ջրաթափանցելիություն, բայց հաճախ սահմանափակված են բարակ շերտով, ինչը դժվարացնում է որոշ մշակաբույսերի աճեցումը:

2. Գյուղատնտեսական հողօգտագործում: Շատվանի բնակիչները զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Հողերը հիմնականում օգտագործվում են կերային խոտերի և որոշ հացահատիկային մշակաբույսերի աճեցման համար: Լեռնային պայմանների պատճառով հողերը առավել հարմար են կերային խոտերի մշակմանը, և բնակիչներն օգտագործում են հողային ռեսուրսները նաև արոտավայրերի համար, ինչը նպաստում է անասնապահության զարգացմանը:

3. Արոտավայրեր: Լեռնային արոտավայրերը տարածված են Շատվանի շրջանում, ինչը թույլ է տալիս անասունների արածեցում: Արոտավայրերն առավել կարևոր են, քանի որ գյուղատնտեսության համար հարմար հողերի ծավալը սահմանափակ է: Լեռնային տեղանքի պատճառով արոտավայրերի օգտագործումը կախված է եղանակային պայմաններից, և հիմնական արոտային շրջաններն օգտագործվում են գարնանից մինչև աշուն:

Այսպիսով, Շատվանի հողօգտագործումը սահմանափակ է լեռնային ռելիեֆի և կլիմայական պայմանների պատճառով, և հողերը հիմնականում օգտագործվում են խոտի մշակման և արոտավայրերի համար: Հողային ռեսուրսների պահպանության և

արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է մշտադիտարկում և կայուն հողային կառավարման միջոցառումներ:

5.4 Կենսաբազմազանություն

Քուսական աշխարհ: Շատվանի տարածքի բուսական աշխարհը տարբերվում է լեռնային և բարձրալեռնային գոտիների բնորոշ բուսականությամբ, որը խիստ կախված է կլիմայական պայմաններից և հողի կազմությունից: Գեղարքունիքի մարզի այս հատվածը ունի բազմազան բուսականություն, որն ազդում է նաև տեղական էկոհամակարգի վրա:

1. Լեռնային բուսականություն: Լեռնային գոտիներում տարածված են տարբեր խոտային և ծաղկային բույսեր, որոնք հարմարված են բարձրադիր վայրերի ցուրտ պայմաններին: Այս բույսերը հիմնականում են՝ գանգուրավոր խոտեր, թրթուրի տեսքով խոտեր, դեղնիներ և այլ լեռնային տեսակներ: Այստեղ հանդիպում են նաև ծառերի որոշ տեսակներ, ինչպիսիք են լեռնային կաղնիները, թխկիները, հացենիները և այլ լայնատերև ծառեր, որոնք սովորաբար աճում են ստորին լեռնային հատվածներում:

2. Բարձրալեռնային մարգագետիններ: Բարձրալեռնային հատվածներում հանդիպող բույսերն ավելի դիմացկուն են կլիմայական պայմաններին և ընդգրկում են մարգագետինների բնորոշ բույսեր, ինչպիսիք են տառեխները, մայրիները, դանդուղները և վայրի գարուկներ: Բարձրալեռնային գոտու մարգագետիններում սովորաբար հանդիպում են բույսեր, որոնք լավ են դիմանում սառնամանիքին և ուժեղ քամիներին՝ կազմելով ամուր խոտածածկույթ:

3. Արոտավայրերի բուսականություն: Շատվանի տարածքը օգտագործվում է նաև որպես արոտավայրեր, ուստի տարածքում առկա են բազմազան խոտատեսակներ, որոնք հարմար են անասունների արածեցման համար: Սա ներառում է ինչպես բնական խոտային բուսատեսակներ, այնպես էլ ցորենազգիներ, որոնք ունեն բարձր սննդային արժեք:

4. Դեղաբույսեր: Լեռնային հատվածում հանդիպում են նաև տարբեր դեղաբույսեր, որոնք ունեն բժշկական նշանակություն: Դրանք են՝ օշինդրը, մայրենի բույսը, կատվախոտը և վայրի անանուխը: Այս բույսերը օգտագործվում են տարբեր ավանդական բուժական նպատակներով:

Կենդանական աշխարհ: Շատվանի և ընդհանուր Գեղարքունիքի մարզի կենդանական աշխարհը խիստ բազմազան է և ներկայացնում է տարբեր կենդանական տեսակների լայն տեսականի, որոնք հարմարվել են լեռնային պայմաններին, որոնցից ամենատարածվածներն են՝ գորշ արջերը, գայլերը, արծիվները, արտաշատյան իժերը, ջերմաստիճանահաճո միջատները և այլն:

5.5 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման համաձայն:

Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Վարդենիս քաղաքում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Վարդենիս համայնքի բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից: Հիմք ընդունելով վերը նշված ձեռնարկը, մինչև 10.000 բնակչության թիվ ունեցող բնակավայրերի համար մթնոլորտային օդում ֆոնային կոնցենտրացիան կարելի է սահմանել որպես՝ **փոշի՝ 0,095 մգ/մ³ , ծծմբի երկօքսիդինը 0,006 մգ/մ³ , ազոտի երկօքսիդինը՝ 0,033 մգ/մ³ , ածխածնի օքսիդինը՝ 1,1 մգ/մ³:** Սույն ցուցանիշները տարածվում են նախատեսվող գործունեության տարածքի վրա, հաշվի անռելով, որ այն գտնվում է Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրի տարածքում:

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում:

5.6 Պատմամշակութային հուշարձաններ

Շատվանի միջնակարգ դպրոցի տեղամասի տեղազննության ընթացքում հայտնաբերվել են 15-17-րդ դարերի գերեզմանոց հուշարձաններ: Շինարարության տեղամասի սահմանները չեն հատվում հուշարձանների տեղադիրքերի սահմանների հետ: Չնախատեսված ազդեցությունների ռիսկի դեպքում շինարարական աշխատանքները կդադարեցվեն և գործողությունները կհամակարգվեն համապատասխան լիազոր կառույցի կամ մարզային ներկայացուցչության հետ:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Նախատեսվող գործունեության տարածքում հնագիտական շերտերի առկայությունը բացառվում է, հաշվի առվելով, որ տարածքը կառուցապատված է, իսկ տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են լիցքային գրունտներն ու տեխնածին առաջացումներ:

Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրությունները, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները գնահատվում են դպրոցի գոյություն ունեցող շենքի ապամոնտաժման և նոր դպրոցի կառուցման գործողությունների ընթացքում, սակայն ազդեցությունները կլինեն ժամանակավոր՝ հաշվի առնելով շին. աշխատանքների ժամանակավոր բնույթը և տեղայնացվածությունը՝ ընգրկելով միայն դպրոցի տարածքը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ հիմնական դրական ազդեցությունները..

- ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում,
- դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշվիվ բարեկարգ և ժամանակակից բացօդյա մարզահրապարակների,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքն ու ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

6.1. Օդային ավազանի աղտոտում

Օրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 106 / 3600, \text{ գ/վ, որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 4 ամիս կամ

4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 7530 մ³ կամ

$G=7530\text{մ}^3 : 704=10.7 \text{ մ}^3/\text{ժամ կամ, իսկ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ } 10.7 \text{ մ}^3 / \text{ժամ} \times 1.7 \text{ տ/մ}^3 = 18.2 \text{ տ/ժամ:}$

$Q = (0.05 \times 0.02 \times 2.5 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 18.2 \times 10^6) / 3600 = 0.3\text{գ/վ}$

Այսպիսով, գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի.

$0.3/\text{վ} \times 704 \text{ ժ}/2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.76\text{տ}$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Կանխատեսվում է, որ նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակում աշխատանքային մակերեսների ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),
- սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:

Օդային ավազանի աղտոտվածության կանխմանն ուղղված միջոցառումների համալիր ցանկը ներկայացված է Բնապահպանական կառավարման պլանում (տես՝ բաժին 5):

Ծրագրի շրջանակում հարակից բնակելի և հասարակական շենքերից ստացված բողբոջների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Շին աշխատանքների հետևանքով մթնոլորտ կարտանետվեն մթնոլորտն աղտոտող որոշ նյութեր մասնավորապես շին. տեխնիկայից արտանետվող՝

- Ածխածնի երկօքսիդ (CO_2)
- Ածխածնի օքսիդ (CO)
- Ազոտի օքսիդներ (NO_x)
- Ածխաջրածիններ
- Ծծմբի երկօքսիդ (SO_2)
- Փոշու մասնիկներ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքը չի հանդիսանում ակտիվ քաղաքաշինական կամ արտադրական գոտի հետևաբար նշված արտանետումները չեն հանգեցնի սահմանային թույլատրելի շեմերի գերազանցման:

6.2. Զրոգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Որպես ջրամատակարարման աղբյուր ծառայելու է համայնքային ջրատարը (Տես՝ հավելված 3)՝ համաձայն համայնքի կողմից տրամադրված միացման սխեմայի:

Դպրոցի նոր շենքի կառուցման և հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր կձառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է առավելագույնը 18882 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար՝ ներառելով քանդման և շինարարության գործընթացները:

$U1 = S1 \times K1 \times T$, որտեղ

$S1$ - ջրվող տարածքի մակերես, 17900 մ²,

$K1$ - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²):

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 88օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 17900 \times 1 \times 0.0015 \times 88 = 2362.8 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) \times T1, \text{ որտեղ}$$

n - իՏ աշխատողների թվաքանակ, 5 մարդ

N - իՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

$T1$ - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 528 օր

$n1$ - բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 45 մարդ

$N1$ - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 45 \times 0.025) \times 528 = 636.2 \text{ մ}^3$$

$$\text{Ընդհանուր ջրապահանջը կկազմի՝ } 2362.8 \text{ մ}^3 + 636.24 \text{ մ}^3 = 2999 \text{ մ}^3$$

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շին. հրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի գրասենյակ, հանդերձարան, լվացարան-ցնցուղարան, փակ պահեստ, ինչպես նաև ճաշարան, բիզնես-կենտրոն, աղբի տարրաներ և այլն:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

6.3. Թափոնների առաջացում և կառավարում

Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի ընդհանուր հողային հանույթը կազմում է 7530 մ³ է, որից ետլիցքը կազմում է 4400մ³: Մնացած 3130 մ³ քանակն իրենից ներկայացվում է փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, որը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, որի վերաբերյալ

տեղեկանքը Վարդենիսի համայնքապետարանից նախատեսվում է ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը: Շինարարության տեղամասում հողի բերրի շերտ առկա չէ:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի, շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ նոր դպրոցի շենքի կառուցման, դպրոցի հին շենքի ապամոնտաժման և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող կազմով թափոնների առաջացում.

Թափոնի անվանում	Ծածկագիր	Վտանգավորությամբ դաս	Քանակ
Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	91200400 01 00 4	IV	մոտ 3 տ
Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	31401100 08 99 5	V	3130 խ.մ
Շինարարական աղբ	91200601 01 00 4	IV	150 խ.մ
Շենքերի քանդումից առաջացած շին աղբ	91200601 01 00 4	IV	2500տ
Եռակցման խարամ թափոնատեսակը	3140480001994	IV	Հաշվարկելի չէ

Նախատեսվող գործունեության ընթացքում քայուղերի և հեղուկ վառելիքի թափոնների առաջացում չի կանխատեսվում:

Գործունեության ընթացքում ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 2500 տ, շինարարական աղբը՝ շուրջ 150 խ.մ: Վերջիններիս հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վարդենիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում, որի վերաբերյալ համաձայնությունը նախատեսվում է ձեռք բերել մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Թափոնների փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն

իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

6.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերի դպրոցին հարակից տարածքում, հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր, բիզնես կետեր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 20-50մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումների:

Շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-մեխանիզմները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնականում աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների ազդեցություններ հարևան ազդակիրների վրա չեն կանխատեսվում: Շինարարական աշխատանքների ընթացքում կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը պետք է վերացվի կամ փոխհատուցվի կապալառու ընկերության սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասը ներկայացված են ԲԿՊ-ում: Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ իրականացնել միայն բողոքների դեպքում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀԾՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

6.5. Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա

Հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոի (շարժական կամ անշարժ) անսպասելի հայտնաբերման դեպքում, համաձայն ՀՀ «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի (1998թ.) և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի ընթացակարգերի, աշխատանքները կդադարեցվեն և շինարար կապալառուն կտեղակացնի Պատվիրատուին, վերջինս էլ՝ լիազոր մարմնին:

6.6. Աշխատանքի անվտանգություն

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվելու աշխատանքային անվտանգության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես ԲԿՊ, բաժին 8):

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:

Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:

Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներն այլն:

Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):

Տանիքի և բարձրության վրա աշխատանքների իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:

Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:

Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում:

Անվտանգության անհատական մոտեցումներ կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին-մոնտաժային աշխատանքների հետ (օրինակ՝ բեռի տեղափոխումը գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով):

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ-ում պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Ծրագրի համար մշակված ԲԿՊ՝ մեղմացնող միջոցառումները և մոնիտորինգի պլանն, ամբողջական ներկայացված են Հավելված 2 և Հավելված 3-ում:

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հիմնական բնապահպանական, ինչպես նաև աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումները, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,

- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտոկա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:
- տարածքի կանաչապատ գոտիները կհամալրվեն արժեքավոր բուսականությամբ:

7.2. Մոնիտորինգ

ՀՏՂՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏՂՀ-ի բնապահպանության երաշխիքների մասնագետները իրականացնելու է մոնիտորինգի դաշտային ստուգայցեր դպրոցի շինարարական տեղամաս ամսական երկու անգամ կտրվածքով: Մոնիտորինգային արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողության շրջանակներում կիրականացվի ամենօրյա հսկողություն, որը կներառի նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: և նկատված հայտաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ժամանակին կտեղեկացվի ՀՏՂՀ-ին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներն իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում:


ՀՏՂՀ-ի կողմից նախատեսվող գործունեության իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ (ԲԱՄ): Շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՏՂՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am): Բողոքների գրանցամատյանի ձևաչափը բերված է Հավելված 11-ում:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2024 թվականի Հոկտեմբերի 2-ին ժամը 12:00 , Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան բնակավայրի վարչական շենքում իրականացվել է նոր դպրոցի և մակապարտեզի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում:

Հանդիպմանը մասնակցել են համայնքի ղեկավարը, դպրոցի տնօրենը, ուսուցչական անձնակազմը, ներկայացուցիչներ պատվիրատու, նախագծային և ՇՄԱԳ իրականացնող կազմակերպություններից, ինչպես նաև Շատվանի բնակիչները:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Առավոտ» օրաթերթի 31.10.2024 համարում:




Շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները Վարդենիսի համայնքապետարան ուղարկել նաև գրավոր:

Հանդիպման արձանագրությունը, մասնակիցների ցուցակը, հանրային քննարկման ժամանակ իրականացված տեսաձայնագրությունը, ինչպես նաև համայնքի ավագանու հանաձայնությունը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ներկայացվում են սույն ՇՄԱԳ հաշվետվությանը կից (տես՝ նաև Հավելված 4):

9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- Տեղեկագիր ՀՀ հիդրոօբերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին: Երևան: 2024թ 1-ին եռամսյակ:
- ՀՀ կառավարության որոշում 596-Ն, 2015: ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ կառավարության 426-Ն որոշումը, 12 ապրիլի, 2018թ: «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգոխնայողության և էներգոարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի N-1243-Ն հրաման, 2015թ: «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին»:
- ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին, 2002 թ:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 102-Ն հրաման, 2020թ: ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին:


ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կարգավորի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 15 ապրիլի 2002 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
- 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**
Մարզ Գեղարքունիք, համայնք Վարդենիս գյուղ Շատվան
- 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
Շատվան համայնքի համայնքապետի որոշում 28.01.2002թ. թիվ 10, ՀՀ կառավարության որոշում 01.12.2005թ. թիվ 2349-Ն
- 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**
Կադաստրային ծածկագիրը՝ 05-073-0012-0002
մակերեսի չափը (հա)՝ 1,2
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 26062023-05-0004, գաղտնաբառ՝ L6EZ9RBSGQIK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կարգավորի կոմիտեի
www.e-cadastr.am կայքից միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	05-073-0012-0002-001	դպրոց	1762 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	05-073-0012-0002-002	Կաթսայատուն	69,6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

